

Կ-056-07.07.2017-ԱՍ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը «անձամբ» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքի» բառերով,

2) 9-րդ մասից հանել «կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,» բառերը,

3) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 13-րդ մասը «հաստատությունում» բառից հետո լրացնել «կամ սովորում է ռազմական ուսումնական հաստատությունում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 36-րդ հոդվածում.

1. 1-ին մասի 3-րդ պարբերությունում «կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու ամսվան» բառերը փոխարինել «կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝» բառերով,

2. 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով (պատճառական կապով) հաշմանդամ ճանաչված անձի կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում զինվորական կենսաթոշակի չվճարված գումարը վճարվում է նաև լիազորագրով, եթե կենսաթոշակառուն

հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժվում է օտարերկրյա պետությունում (ներառյալ՝ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը): Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար (անկախ սույն հոդվածի 1-ին մասի պահանջից), բայց ոչ ավելի, քան մինչև հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժումն ավարտվելը:».

3. 5-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը և 3-րդ մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել, իսկ 5-րդ մասը «վերսկսելու» բառից հետո լրացնել «, քրեակատարողական հիմնարկում գտնվող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու» բառերով:

Հոդված 5. Օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Թաղման նպաստ նշանակելու եւ վճարելու կարգը, թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ թաղման նպաստ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 6. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա.

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմումի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում (եթե կենսաթոշակառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում)՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ,

2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող մեկ տարվա

այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կենսաթոշակառուն կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը,

3) անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում (չի վճարվում), իսկ մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը: Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է՝ հաշվի առնելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 33-րդ հոդվածում՝

1) *1-ին մասը «անձամբ» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ սույն օրենքի 36-րդ հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքի» բառերով,*

2) 9-րդ մասից հանել «կենսաթոշակ նշանակելու համար ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,» բառերը,

23) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով.

«10. Կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 2. Օրենքի 35-րդ հոդվածի 13-րդ մասը «հաստատությունում» բառից հետո լրացնել «կամ սովորում է ռազմական ուսումնական հաստատությունում» բառերով:

Հոդված 3. Օրենքի 36-րդ հոդվածում.

4. *1-ին մասի 3-րդ պարբերությունում «կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու ամսվան» բառերը փոխարինել «կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝» բառերով,*

5. 4-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մասով.

«4.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով (պատճառական կապով) հաշմանդամ ճանաչված անձի կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում զինվորական կենսաթոշակի չվճարված գումարը վճարվում է նաև լիազորագրով, եթե կենսաթոշակառուն

հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժվում է օտարերկրյա պեպտոբակտերիանոզ (ներառյալ՝ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը): Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար (անկախ սույն հոդվածի 1-ին մասի պահանջից), բայց ոչ ավելի, քան մինչև հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժումն ավարտվելը կենսաթոշակատուի՝ հիվանդանոցից դուրս գրվելը:»:

6. 5-րդ մասի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 4. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը և 3-րդ մասի 8-րդ կետը ուժը կորցրած ճանաչել, իսկ 5-րդ մասը «վերսկսելու» բառից հետո լրացնել «, քրեակատարողական հիմնարկում գտնվող կամ հոգեբուժական հաստատությունում բուժվող անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու» բառերով:

Հոդված 5. Օրենքի 44-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«6. Թաղման նպաստ նշանակելու եւ վճարելու կարգը, թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ թաղման նպաստ վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է լիազոր մարմինը:»:

Հոդված 6. Օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի «Հայաստանի Հանրապետության կառավարությունը» բառերը փոխարինել «լիազոր մարմինը» բառերով:

Հոդված 7. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ մասով.

«8. Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա.

4) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմումի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակատուն, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակատուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուի դեպքում (եթե կենսաթոշակատուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում)՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ,

5) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող մեկ տարվա

այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կենսաթոշակառուն կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը,

6) անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում (չի վճարվում), իսկ մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը: Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է՝ հաշվի առնելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը:»:

Հոդված 78. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: ~~Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա:~~

~~կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմումի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում (եթե կենսաթոշակառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում)՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ,~~

~~կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կենսաթոշակառուն կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը,~~

~~անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում (չի վճարվում), իսկ մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը: Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է՝ հաշվի առնելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
ՀՀ կառավարություն	1. Նախագծի 1-ին հոդված	Հանել 1-ին մասը՝ խմբագրելով նաև համարակալումը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը
ՀՀ կառավարություն	2. Նախագծի 1-ին հոդված	Լրացնել նոր՝ Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասում լրացում կատարելու վերաբերյալ դրույթով՝ կենսաթոշակ նշանակելու դիմումը անձամբ ներկայացնելու պայմանից բացառություն սահմանելով օտարերկրյա պետությունում բուժվող՝ ՀՀ պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով (պատճառական կապով) հաշմանդամ	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը

		ճանաչված անձի համար և վերանայելով նաև համարակալումը:		
ՀՀ կառավարություն	3. Նախագծի 2-րդ հոդված	<p>հանել «, կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող անձը բուժման նպատակով գտնվում է օտարերկրյա պետությունում և նրա հաշմանդամության պատճառակալ կապը Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքն է կամ խեղումը» բառերը:</p>	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը
ՀՀ կառավարություն	4. Նախագծի 3-րդ հոդված	<p>1. Գործող օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունում «կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու ամսվան» բառերը փոխարինել «կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝» բառերով</p> <p>2. լրացնել նոր մասով, որով գործող օրենքի 36-րդ հոդվածը կլրացվի հետևյալ բովանդակությամբ՝ նոր 4.1 մասով.</p> <p>«4.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մար-</p>	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը

		<p>տկան հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու, կամ ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով (պատճառական կապով) հաշմանդամ ճանաչված անձի կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելու դեպքում զինվորական կենսաթոշակի չվճարված գումարը վճարվում է նաև լիազորագրով, եթե կենսաթոշակառուն հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժվում է օտարերկրյա պետությունում (ներառյալ՝ հիվանդանոցային ձևով ախտորոշիչ հետազոտությունները և վերականգնողական բուժումը): Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է կենսաթոշակ ստանալու իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար (անկախ սույն հոդվածի 1-ին մասի պահանջից), բայց ոչ ավելի, քան մինչև կենսաթոշակառուի՝ հիվանդանոցից դուրս գրվելը»:</p>		
<p>«Կ կառավարություն</p>	<p>5. Նախագծի 3-րդ հոդված</p>	<p>Օրենքի 36-րդ հոդվածում լրացվող 4.1-ին մասում «կենսաթոշակառուի՝ հիվանդանոցից դուրս գրվելը» բառերը փոխարինել «հիվանդանոցային ձևով (պայմաններում) բուժումն ավարտելը» բառերով:</p>	<p>Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p>Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը</p>

	6. Նախագծի 4-րդ հոդված	<p>Հաշվի առնելով նախագծի 1-ին հոդվածում առաջարկվող փոփոխությունները՝ խմբագրել 4-րդ հոդվածը՝ նկատի առնելով նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1325 որոշումը, որի կատարումն ապահովելու նպատակով, հոդվածը լրացնել այդ որոշմամբ ՀՀ Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր ճանաչված՝ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը և դրան փոխկապակցված՝ նույն հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկությամբ:</p>	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը
ՀՀ կառավարություն	7. Նախագծի 7-րդ հոդված	<p>ՀՀ Սահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի թիվ ՍԴՈ-1325 որոշման կատարումն ապահովելու նպատակով հոդվածը լրացնել անցումային շրջանի խնդիրները կարգավորող դրույթներով՝ հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա.</p> <p>1) կենսաթոշակ ստանալու իրավունքը</p>	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը

		<p>վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմումի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն, իսկ տասնչորս տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում (եթե կենսաթոշակառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում)՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ,</p> <p>2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կենսաթոշակառուն կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը,</p> <p>3) անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում, իսկ մահվան պատճառով չվճարված կենսա-</p>		
--	--	---	--	--

		թռչակի գումարը հաշվարկվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը: Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է՝ հաշվի առնելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը:»:		
ՀՀ կառավարություն	8. Նախագծի 7-րդ հոդված	Անցումային շրջանի խնդիրները կարգավորող դրույթները շարադրել որպես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 8-րդ մաս՝ վերանայելով նաև հոդվածների համարակալումը:	Ընդունվել է, նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն	Հանձնաժողովն ընդունել է առաջարկությունը